նորա ցաւակցութեան կգան, իսկ նա անողին կը հայհոյէ խիստ ծանր բառերով և իւր խօսքին վերջաւորութիւն կտայ ասելով—«Եթէ ողջ մնացի, քո կնկան լաչակն քո գլուխ կը կապեմ»։

Դեռ Կարին, Խնուս, Պուլանխ, Մանազկերտ, Ալաշկերտ և Պայազիտ առանց բացայայտիչի կը ճանաչեն թէ ո՞րն է «Պետրոս աղայի տունը»։

Նա ունէր ընդարձակ կալուածներ, հարստութիւն. նորա ուղտերն շարունակ Դաւրիժից Ցրապիզօն կերթևեկէին։

Պետրոս աղայի օրով Բագրևանդայ ժողովուրդն բոլորովին ապահով դրութեան մէջ էր։ Նորա մեծ մեծ գործերն, նկարագրել առանձին հատորի կարօտ են, զոր կը թողում ապագային կարող անձերու. որպէս զի այդ մեծ մարդու գործերն կանոնաւոր ի լոյս ածեն։

Պետրոս աղան ունէր երեք աղջիկ. երկու որդիք. նաև եղբայրներ, ոլք չը կարողացան նորա հարստութիւնը կառավարել, փճացուցին ամեն հարստութիւն, արդէն հարստութեան մէկ մասն կառավարութեանց դիմադրելու համար վատնած էր, ծերութեան միջոցին մի բան չունէր. բացի քանի մի կալուածներէ, զրեթէ 1879 թուին սեպտ. ամսոյ մէջ թշուառ վիճակի մէջ մեռաւ։ Մեծ որդին Աւետիս արդէն բաժան էր, իւր ունեցածն շռայլութեամբ փճացուց, Մկրտիչ և Յիմարեցաւ, Թաթոս և Սուքիաս եղբայրներն իւր ողջութեան ատեն հետը չը վարուեցան, որով միայն այս օր այս տան անունը կայ։ Դեռ մատով ցոյց կտան նորա մեծ դէվելիկը (ուղտանոց) և տունը։

Նորա պատիւը և ազդեցութիւնը ցոյց տալու համար իրեն ուղղուած կարգ մի նամակները տեսած